**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 2**
**N ՇՀԾՁԲ-7/9-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **20 .12.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և «Միտք-Կ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 08.05.2014թ. կնքված N ՇՀԾՁԲ-7/9-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և կարճ ծառայության արդյունքում 1600 լրակազմ «Կոստյում բամբակյա, կեպիով» ապրանքատեսակը մատակարարելու համար նախատեսել կանխավճար՝ 5 280 000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամի չափով, ընդ որում, Պատվիրատուն սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Կատարողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ մատուցվող ծառայությանը համամասնորեն:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 00867415<br>ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ | «Միտք-Կ» ՍՊԸ<br>ք. Վանաձոր, Նժդեհի 7հ<br>«Յունիբանկ» ՓԲԸ Վանաձոր մ/ճ<br>Հ/Հ 24101005129000<br>ՀՎՀՀ 06903588<br>տնօրեն |
| Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ | Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ |

# <u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/13-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-7/9» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի մայիսի 8-ին կնքված N **ՇՀԾՁԲ-7/9-1** ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պայմանգրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրում նախատեսել կանխավճար:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և կարի ծառայության արդյունքում 1600 լրակազմ «Կոստյում՝ բամբակյա, կեպիով» ապրանքատեսակը մատակարարելու համար նախատեսել կանխավճար՝ 5 280 000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) դրամի չափով, ընդ որում, Պատվիրատուն սույն փոփոխությունն ուժի մեջ մտնելուց հետո 2 բանկային օրվա ընթացքում նշված գումարը փոխանցում է Կատարողի բանկային հաշվին: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձման-ընդունման արձանագրությունների հիման վրա՝ մատուցվող ծառայությանը համամասնորեն:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

**Հեռախոս՝ <u>010-29-44-99:</u>**

**Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**